ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10
(ՔԱՂՎԱԾՔ)

Վանաձորի համայնքի ավագանու արտահերթ նիստի՝ կայացած 11.12.2017 թ.

Ք. Վանաձոր Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝ Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ

Արմեն Մատինյանը, Արտյոմ Գրիգորյանը, Սեյրան Ղամբարյանը, Մարինե Հովհաննիսյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Վահագն Ավագյանը, Վահե Դոխոյանը և Արման Ափինյանը:

Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Սեյրան Աղաբեկյանը, Արևիկ Լոքյանը :

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը, Էրիկ Մովսիսյանը, Հասմիկ Խլոպուզյանը, Տիգրան Նազարյանը;

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

Գայանե Քալանթարյանը, Խորեն Վարդանյանը

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ *Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հրանտ Այվազյանը, Միհրան Քոչարյանը , Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Արմեն Եղիազարյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը:*

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու անդամներ *Այծեմնիկ Օհանյանը, Հրանտ Մարգարյանը, Դավիթ Հակոբյանը*:

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ՀԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 15.10-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել ավագանու արտահերթ նիստի օրակարգը:

Կողմ՝ 18 , քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական

սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի թիվ 4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ.՝ Ա.Օհանյան

2. «Հաշվապահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3. Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.՝ Կ.Պառավյան

4. Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.՝ Գ.Մացակյան

5. Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

1. ԼՍԵՑԻՆ - Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքական, հայեցողական, համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի թիվ 4-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Օհանյանը

Նիստն վարող Մամիկոն Ասլանյանն առաջարկեց համայնքապետարանի կառուցվածքային ստորաբաժանումների անվանումները համապատասխանեցնել ՏԻՄ օրենքով սահմանված համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների դրույթներին և "Կոմունալ տնտեսության, բարեկարգման և բնակֆոնդի" փոխարեն բաժինն անվանել "Կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության" բաժին, կատարելով մեկ հաստիքի վերաբաշխում:

Նիստը վարողին և զեկուցողին հարցեր ուղղեց ավագանու անդամ Վահագն Ավագյանը՝ համատիրությունների հետ համայնքապետարանի փոխհամագործակցության վերաբերյալ:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց նիստը վարողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը իր կողմից առաջարկված փոփոխությունների հետ միասին:

Քվեարկությամբ, կողմ՝ 18, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - «Հաշվապահ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 17, ընդունվեց որոշում:
Ավագանու անդամ Արման Ափինյանը բացակայեց նիստից:

3. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

- Զեկուցեց կոմունալ տնտեսության, բնակֆոնդի և համատիրությունները համակարգող բաժնի պետ Կ.Պառավյանը

Զեկուցողին հարց ուղղեցին ավագանու անդամներ Սեյրան Ղամբարյանը՝ «ՆԵՑՈՒԿ ՀՁ»-ում հանրակացարանների պարետների պարտականության վերաբերյալ, Սոխակ Մելքոնյանը՝ չսահմանված վայրերում աղբ թափողների նկատմամբ կիրառվելիք կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ:
Հարցերին պատասխանեցին զեկուցողը և նիստը վարողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝ 17 , ընդունվեց որոշում:
4. ԼՍԵՑԻՆ - Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ Գ. *Մացակյանը:*

Զեկուցողին հարցեր ուղղեցին ավագանու անդամներ Կարեն Դավթյանը՝ հաստիքների դրույքաչափերի վերաբերյալ, Սեյրան Ղամբարյանը՝ հաստիքների կրճատման օբյեկտիվ անհրաժեշտության վերաբերյալ, Հայկազ Մովսիսյանը՝ վարչական հաստիքների կրճատման չափորոշիչների վերաբերյալ:
Հարցերին պատասխանեցին և պարզաբանումներ տվեցին զեկուցողը և նսիտը վարողը:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:
Քվեարկությամբ, կողմ՝17 , ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ – Վանաձոր համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

-Զեկուցեցին համայնքի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը և մշակույթի, կրթության և երիտասարդության հարցերի բաժնի պետ Գոռ Բաղյանը:

Զեկուցողին հարց ուղղեցին ավագանու անդամներ Արմեն Մատինյանը՝ հաստիքացուցակների օպտիմալացման արդյունքում համայնքի բյուջեի հնարավոր խնայողությունների վերաբերյալ և Կարեն Դավթյանը կրկին ըստ հաստիքների դրույքաչափերի սահմանման վերաբերյալ:

Զեկուցողի առաջարկությամբ հարցին պատասխանեց աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Առաջարկը դրվեց քվեարկության:
Քվեարկությամբ, կողմ՝ 17 կողմ, ընդունվեց որոշում:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը